

30.06.2013-31.12.2013թթ-ի ընթացքում Հայթաղ համայնքի գյուղապետարանի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները

1. Հուլիս ամսին գյուղապետարանի կողմից կազմակերպվել են երեք դասընթացներ, աշխատակիցների և ազգաբնակչության համար /գյուղատնտեսություն և համակարգչային ուսուցում/:
2. Հուլիսի 5-25-ը տրամադրվել են ավտոբուսներ դպրոցի աշակերտներին էքսկուրսիաներ գնալու համար:
3. Գյուղապետարանի աջակցությամբ բերվել են 3 կոմբայններ և կազմակերպվել է ազգաբնակչության ցորենի բերքահավաքը:
4. Օգոստոս 5-ից մինչև 25-ը ամսին գյուղապետարանի կողմից մաքրվել և բարեկարգվել է դպրոցի, Հայրենական և Արցախյան զոհերի հիշատակին կառուցված հուշարձանների տարածքը:
5. Օգոստոս ամսվա ընթացքում բարեկարգվել է ևս 11 դաշտամիջյան ճանապարհներ:
6. Գյուղապետարանի աջակցությամբ կազմակերպվել է սեպտեմբերի 1-ի նվիրված միջոցառում և բոլոր 1-ին դասարանցիները և բոլոր գերազանցիկները ստացել են հուշանվերներ:
7. Սեպտեմբեր ամսվա ընթացքում մաքրվել և բարեկարգվել է մարզադաշտի տարածքը և ձեռք են բերվել նոր սպորտային պարագաներ՝ ֆուտբոլի, վոլեյբոլի ձեռքի գնդակի նոր ցանցեր և գնդակներ: Ծանրամարտի մարզիկները պարգևատրվել են հուշանվերներով:
8. Սեպտեմբեր ամսվա ընթացքում գյուղապետարանի կողմից երկրորդ անգամ մաքրվել է համայնքի փակ դրենաժային համակարգը և բաց դրենաժային համակարգի խցանումները:
9. Զինկոմիսարիատի հետ համատեղ կազմակերպվել է աշնանային զորակոչային աշխատանքները և ԴՕՍԱԱՖ-ում սովորող ուսանողների ճանապարհային ծախսը հոգացել է գյուղապետարանը:
10. Սեպտեմբերի 5-ին գյուղապետարանի աջակցությամբ կազմակերպվել է նոր վարկավորման ծրագրեր, 14 բնակիչների և վարկային կազմակերպությունների հետ միասին:

11. Գյուղապետարանի աջակցությամբ կազմակերպվել և նշվել է Հայաստանի Հանրապետության անկախությանը նվիրված միջոցառում Սարդարապատում:
12. Գյուղապետարանի աջակցությամբ կազմակերպվել և նշվել է Արմավիրի մարզի բերքի տոն Արմավիր քաղաքում:
13. Գյուղապետարանի աջակցությամբ կազմակերպվել և նշվել է ուսուցիչների տոնը:
14. Սեպտեմբեր ամսին գյուղապետարանի աջակցությամբ երկրորդ անգամ մաքրվել է համայնքի ներսնտեսային ոռոգման ցանցը՝ 9000մ:
15. Սեպտեմբեր ամսին Հայթաղ համայնքի գյուղապետարանի խորհրդատվական կենտրոնում մշակվել են գյուղատնտեսության աշնանային աշխատանքների նախապատրաստական աշխատանքները:
16. Ազգաբնակչությանը գյուղապետարանը օգնել է ծեռք բերելու անհրաժեշտ բույսերի սերմացուներ:
17. Ազգաբնակչության 4 ֆերմերներին օժանդակել է երկարաժամկետ վարկավորման համար մշակելու ծրագրեր:
18. Գյուղապետարանի և միջնակարգ դպրոցի հետ համատեղ իրականացվել է ծրագիր՝ 6-12-րդ, 2-3-րդ դասարանների և նախակրթարանի բոլոր աշակերտների համար մշակույթային միջոցառումներ: Դեկտեմբերի 26-ին դպրոցի աշակերտների համար կազմակերպվել է ամանօրյա միջոցառում:
19. Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ազգաբնակչության հետ համատեղ ճշգրտվել են հողի հարկի, գույքահարկի հետ կապված ապառքների ցուցակները և ողջ ազգաբնակչությանը տրվել են ծանուցագրեր ժամանակին հարկային պարտավորությունները կատարելու համար:

Դավիթ Մանուկյան
Սարգսյան